Նոյեմբերի 14-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարեց հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկեց 8 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի Շոշ Պատարա, Մարտունու շրջանի Թաղավարդ գյուղերի համայնքային կենտրոնների ու Ստեփանակերտ քաղաքի Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջի կահավորման ծրագրերը.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ Հրեշտակապետաց եկեղեցու տարածքի բարեկարգման ծրագիրը.

«Օյունջյան» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրու «Օյուն-ջյան» միջնակարգ դպրոց-վարժարան ՊՈԱԿ-ի մասնաշենքի մասնակի վերանորոգման ծրագիրը.

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բնակարանի մասնակի վերանորոգում» ծրագիրը.

«Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ջաղացաձոր համայնքում խմելու ջրագծի կառուցման ծրագիրը.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ ու բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: